ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ապրիլի 2018 թ. N 26

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	**«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ**
Կրճատ անվանումը	ԳՊՀ
Գործունեության հասցեն	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2018թ. ապրիլի 12-ի դռնբաց նիստում **Գորիսի պետական համալսարանի** (այսուհետ՝ ԳՊՀ, բուհ կամ Համալսարան), փորձագիտական խմբի ղեկավարի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց **Գորիսի պետական համալսարանի** ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման մասին բուհի գործողությունների ծրագիրը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը՝ ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 31 մարտի 2017թ.
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝ 18 հուլիսի 2017թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 1-3 նոյեմբերի 2017թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 16 հունվարի 2018թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 9 փետրվարի 2018թ.

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳՊՀ-ն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններից է և միտված է «մասնագիտության կրթական ծրագրերի ու ծառայությունների միջոցով պատրաստել բակալավրի ու մագիստրոսի որակավորումներով համակողմանի զարգացած, աշխատաշուկայում մրցունակ, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ընդունակ բարձրորակ կադրեր տարածաշրջանի կրթության, տնտեսության, արդյունաբերության ու տեղեկատվակական տեխնոլոգիաների ոլորտների համար, ստեղծել ուսանողակենտրոն միջավայր, որը բնութագրվում է տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքներին համահունչ ճկուն կրթական ծրագրերով, մշակված դասընթացներով, դասավանդման և ուսումնառության արդի մեթոդներով»:

ԳՊՀ-ի ծավալած գործունեությունը հիմնականում համահունչ է իր առաքելությանը: Այնուամենայնիվ, ակնկալվող արդյունքներն ու գնահատման կողմնորոշիչ ցուցիչները չափելի չեն և չեն արտացոլում ռազմավարական նպատակների իրականացումն ու ձեռքբերումները: Ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման համընդհանուր մոտեցման, ինչպես նաև հստակ ու հուսալի մեխանիզմների բացակայությունը վտանգի տակ է դնում ԳՊՀ-ի գործունեության ձեռքբերումների և բացթողումների վերհանման, ինչպես նաև հետագա ճիշտ և արդյունավետ պլանավորման գործընթացները:

Շահակիցների ներգրավվածության մեխանիզմները բավարար չեն ԳՊՀ-ի գործունեության մեջ նրանց ներգործուն մասնակցությունն ապահովելու համար: ԳՊՀ-ի արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների ոչ արդյունավետությունը, վերջիններիս պասիվ ներգրավվածությունը ռազմավարական պլանի մշակման գործընթացում, ինչպես նաև աշխատաշուկայի ուսումնասիրության բացակայությունը վտանգի տակ են դնում ԳՊՀ-ի առաքելությամբ սահմանված նպատակների ամբողջական իրականացումը՝ հաշվի առնելով ԳՊՀ-ի՝ տարածաշրջանի կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու հանձնառությունը:

ԳՊՀ-ն ներկայում իրավական կարգավիճակի փոփոխությունների փուլում է, որը զգալիորեն խոչընդոտում է բուհի ռազմավարական կառավարման պարբերական գործընթացներին: Նոր կարգավիճակը կարող է ընդլայնել բուհի գործունեության ոլորտները՝ դրական ազդեցություն

ունենալով ԳՊՀ-ի ֆինանսական կարողությունների և ձեռնարկատիրական գործունեության բազմազանեցման վրա: Փոխակերպման այս ժամանակավոր վիճակը բուհի կողմից դիտվում է որպես նոր ռազմավարության մշակման հիմնական խոչընդոտ:

ԳՊՀ-ի կազմակերպական կառուցվածքն առավել հստակեցման անհրաժեշտություն ունի՝ ելնելով զարգացման գերակա ուղղությունների և ռազմավարական նպատակների իրականացման կարևորություններից: Կառավարման համակարգի ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով: Չնայած տարբեր մակարդակներում առկա են պլանավորման և իրականացման գործընթացներ՝ այնուամենայնիվ, գնահատման և բարելավման գործընթացները բացակայում են:

Ողջունելի է, որ ԳՊՀ-ն ուսանողներին ու դասախոսներին ներգրավում է կառավարման գրեթե բոլոր մարմիններում, հնարավորություն ընձեռում ազատ արտահայտել իրենց կարծիքը և մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը:

Ներկայում ԳՊՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար կիրառվող հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց անցկացման նպատակայնությունը, պարբերականությունը, մեթոդաբանությունն, ինչպես նաև հարցվածների ներկայացուցչականության շրջանակը թույլ չեն տալիս հարցումները համարել ներքին և արտաքին շահակիցների կարծիքների վերհանման արդյունավետ եղանակ:

ԳՊՀ-ն ուսումնառության առկա և հեռակա ձևերում իրականացնում է բակալավրի 20, իսկ մագիստրատրոսի՝ 11 կրթական ծրագիր: Բուհի մասնագիտության կրթական ծրագրերը համահունչ են նրա առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, և փորձեր են արվում դրանք համապատասխանեցնել նաև աշխատաշուկայի պահանջներին: ՄԿԾ-ներում սահմանված են ուսումնառության ակնկալվող արդյունքները, որոնք հիմնականում համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-ին. այնուամենայնիվ, դրանք հաճախ ընդհանրական են ձևակերպված: Կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում դասախոսակենտրոն են, սակայն վերջին տարիներին փորձեր են արվում անցում կատարել ուսանողակենտրոն մոտեցմանը: ԳՊՀ-ն ունի գնահատման քաղաքականություն, ավարտական աշխատանքների և թեզերի գնահատման չափանիշներ, այնուամենայնիվ բուհում կիրառվող գնահատման մեթոդները ոչ միշտ են համապատասխանում ակնկալվող արդյունքներին, ինչը թույլ չի տալիս չափել փաստացի ձեռքբերված վերջնարդյունքները: Թեև բուհը որոշ քայլեր է ձեռնարկել ակադեմիական ազնվության պահպանման համար, սակայն ակադեմիական ազնվության լիարժեք ապահովման և գրագողության վերահսկման նպատակով իրականացվող քայլերը համակարգված չեն: Ողջունելի է, որ բուհը մշակել է ԳՊՀ կրթական ծրագրերի և ուսումնական պլանների մշակման, հաստատման, գնահատման և մշտադիտարկման կարգ, վերջինս, սակայն, լիարժեք չի դրվել կիրառության մեջ:

ԳՊՀ-ում ուսանողների ընտրությունը և ընդունելությունն իրականացվում է հստակ մեխանիզմների միջոցով, որն իր դրական ազդեցությունն է ունենում գործընթացի արդյունավետ և թափանցիկ իրականացման վրա: Ուսանողների մասնակցությունը որոշումների կայացմանը կարևորվում է բուհի կողմից: ԳՊՀ-ում ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ են առկա, սակայն կարիքների բավարարմանն ուղղված հետագա գործընթացները կանոնակարգված չեն:

ՄՈՒՀ-ի ուսանողների մեծ մասն ուսանում է հեռակա համակարգում: Միևնույն ժամանակ կարիքների բացահայտման, իրավունքների պաշտպանության և ուսանողների համար նախատեսված այլ մեխանիզմները գերազանցապես կիրառվում են առկա համակարգում սովորող ուսանողների շրջանում, որը կարող է ազդել հեռակա համակարգում տրամադրվող կրթության որակի, դրա շարունակական բարելավման և աշխատաշուկայում մրցունակ մասնագետների թողարկման վրա:

ԳՊՀ-ն կարևորում է բարձր մասնագիտական որակներ ունեցող դասախոսներով ապահովվածության անհրաժեշտությունը: Այդ նպատակով ԳՊՀ-ում մշակվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության ժամանակավոր կանոնակարգ, ինչը նպաստում է դասախոսական կազմի կանոնակարգված ընտրությանը, սակայն արդյունավետության տեսանկյունից ընտրության մեխանիզմները չեն գնահատվել: Ուսումնաօժանդակ կազմի ընտրության համար մրցութային ընթացակարգ համալսարանում առկա չէ, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ուսումնաօժանդակ կազմի ընտրության գործընթացների օբյեկտիվության և նպատակայնության վրա: Բուհի ֆակուլտետների և որոշ ամբիոնների ղեկավարները երկար ժամանակ աշխատում են որպես պաշտոնակատարներ, ինչն անկասկած բացասական է ազդում որակյալ կառավարման վրա:

ԳՊՀ-ն ունի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերական գնահատման համար սահմանված մեխանիզմներ, սակայն դրանց վերլուծության բացակայությունը հնարավորություն չի ընձեռում դատել մեխանիզմների արդյունավետության մասին: Բացահայտված թերացումների վերացման համար հիմնականում չեն իրագործվում համապատասխան միջոցառումներ, ինչը խոչընդոտում է դասավանդման որակի բարելավմանը: Օտար լեզվի դասընթացների ցածր արդյունավետությունը, մասնագիտական որակների կատարելագործման միջոցառումների բացակայությունը խոչընդոտում են դասավանդողների շարունակական զարգացմանը, ՄԿԾ-ների միջազգայնացման և շարժունության գործընթացներին: Սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքները բուհում համակարգված չեն, բացակայում է մենթորության ինստիտուտը, ինչը կարող է խոչընդոտել սկսնած դասախոսների զարգացմանն, ազդել դասավանդման որակի վրա:

Վերջին հինգ տարիներին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակական աճ է արձանագրվել, նման ցուցանիշները գովելի են և անկասկած բերում են դասավանդման որակի բարձրացմանը: Սակայն պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածությունն ամբողջապես երաշխավորված չէ: Դրական է, որ կրթական ծրագրերն իրականացնելիս արտաքին համատեղության կարգավիճակով հրավիրվում են նաև արտադրական փորձառություն ունեցող գործատու դասախոսներ, քանի որ վերջիններս նպաստում են ՄԿԾ-ներում պրակտիկ բաղադրիչի ներդրմանը: Մտահոգիչ է միևնույն դասավանդողի կողմից մի քանի դասընթաց վարելու պրակտիկան, ինչը կարող է ազդել դասավանդման որակի վրա, ինչպես նաև խոչընդոտել կրթական բնականոն գործընթացը:

Բուհի ռազմավարական հայեցակարգում սահմանված են հետազոտության ոլորտում իր հետաքրքրություններն արտացոլող ընդհանուր դրույթներ: Այնուամենայնիվ, դրանց գերհավակնոտ լինելը, սահմանված հետազոտական բազմաքանակ ուղղություններն, այն էլ՝ գիտահետազոտական գործունեությունը համակարգող ստորաբաժանման բացակայության պայմաններում, ռիսկային է դարձնում նշյալ դրույթների իրականացումը: Հետազոտության ոլորտում կոնկրետ սահմանված

առաջնահերթությունների բացակայությունը չի ստեղծում նպաստավոր միջավայր ԳՊՀ-ի համար՝ տարածաշրջանում իր ուրույն դերակատարությունն ունենալու տեսանկյունից:

ԳՊՀ-ն գիտահետազոտական ոլորտի ֆինանսական պլանավորում չի իրականացնում, իսկ բյուջեից գիտահետազոտական զարգացման նպատակով բավարար ֆինանսներ չեն հատկացվում: Համալսարանում հետազոտությունը չի հանդիսանում եկամտի աղբյուր: Հետազոտությունները հիմնականում իրականացվում են ՊԴ կազմի կողմից անհատական նախաձեռնություններով՝ սեփական նախասիրություններին համապատասխան, որոնք փոխկապակված չեն բուհի ռազմավարության հետ, ինչն էլ կարող է բացասաբար ազդել հետազոտական գործունեության համակարգվածության, աշխատանքների կազմակերպման վերահսկողության, արդյունավետության գնահատման, դասավանդման որակի, դասավանդվող նյութերի բովանդակության և ուսումնական գործընթացի փոխկապակցման վրա: ԳՊՀ-ն կարևորում է հետազոտությունների միջազգայնացման անհրաժեշտությունը, սակայն միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությանն ուղղված քայլերը դեռևս շոշափելի չեն:

Դրական է, որ բուհում ստեղծվել է ՈՒԳԸ և այն, որ բուհում իրականցվել են մի շարք ազգային և միջազգային գիտաժողովներ: Բուհում իրականացված հետազոտությունները, հազվագյուտ բացառությամբ, տպագրված են առանց ազդեցության գործակցի և հիմնականում տեղական ամսագրերում, ինչը խոչընդոտում է հետազոտական արդյունքների միջազգայնացմանը: Գիտահետազոտական գործունեության կապն ուսումնառության հետ իրականացվում է ըստ դասավանդողների նախաձեռնության՝ առանց սահմանված մեխանիզմների, ինչն էլ կարող է բացասաբար ազդել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործընթացի համակարգվածության վրա:

ԳՊՀ-ն ջանքեր է գործադրում՝ միտված իր առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար համապատասխան ռեսուրսներ տրամադրելուն: Թեև բուհը փորձում է հայթայթել և հատկացնել ֆինանսական միջոցներ լսարանային, լաբորատոր պայմանների, գրադարանային ֆոնդի և այլ ենթակառուցվածքների համալրման, բարելավման, արդիականացման և ընդլայնման համար, այնուամենայնիվ ԳՊՀ-ի ֆինանսական միջոցները սահմանափակ են, ռեսուրսային բազայի հարստացումը հիմնականում կատարվում է միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում: ԳՊՀ-ի բյուջեն հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, որը կայունության տեսակետից կարող է խնդիրներ առաջացնել: Առկա չէ ֆինանսական ռեսուրսների բաշխման և օգտագործման արդյունավետության վերլուծության, ինչը թույլ չի տալիս գնահատել և վերլուծել համալսարանի ֆինանսական կայունության ցուցանիշները և զարգացման հնարավորությունները:

ԳՊՀ-ի ռեսուրսային բազան հիմնականում բավարար է ՄԿԾ-ների իրականացման համար: Դրական է, որ բուհում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու ընթացակարգ, որը բուհը նախատեսում է բարելավել: ԳՊՀ-ն առաջին քայլերն է ձեռնարկել սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ: Դրական է, որ բուհը ռեսուրսների և ծառայությունների բավարարվածության վերաբերյալ պարբերաբար իրականացնում է հարցումներ, այդուհանդերձ չեն

իրականացվում գնահատման արդյունքների հիման վրա բացահայտված թերացումների բերալավմանն ուղղված քայլեր:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության հստակ համակարգ, որը պահանջում է պարբերական հաշվետվություններ, ամփոփվում է ռեկտորի տարեկան հաշվետվությամբ և հրապարակվում: Այնուամենայնիվ, հաշվետվությունները բովանդակային առումով ունեն բարելավման կարիք, քանի որ դրանցում հիմնականում արձանագրված են բուհի գործունեության վերաբերյալ փաստեր, վիճակագրական տվյալներ, բացակայում է ուղղակի կապը բուհի ռազմավարական ծրագրի հետ, ինչպես նաև վերլուծական մոտեցումը և վերհանված թերությունների վերացմանն ուղղված քայլերի առաջարկները:

Դրական են բուհի կողմից ձեռնարկվող քայլերը՝ ԳՊՀ-ում իրականացվող գործընթացները հասարակության համար հասանելի և թափանցիկ դարձնելու ուղղությամբ: Այդուհանդերձ, վերոնշյալի համար ամենակարևոր գործիքներից մեկը՝ բուհի պաշտոնական կայքէջն ունի շուտափոյթ բարելավման կարիք, քանի որ վերջինս առանցքային նշանակություն կարող է ունենալ բուհի դրական կերպարի ձևավորման առումով: Գովելի է, որ բուհում ձևավորվել են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հարթակներ, սակայն այս ոլորտում առկա են խնդիրներ՝ հետադարձ կապերի կայունության և արդյունավետության ապահովման տեսանկյունից:

ԳՊՀ-ն որոշ քայլեր է ձեռնարկում միջազգայնացման և ազգային մակարդակում արտաքին համագործակցության ուղղությամբ: Այս առումով ԳՊՀ-ն սահմանել է ռազմավարական նպատակներ, որոնք, սակայն, իրականացման տեսանկյունից գերհավակնոտ են, և դրանց իրագործման համար համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ չեն տրամադրվում: Առկա չեն ոլորտը կանոնակարգող քաղաքականություններ և ընթացակարգեր, ինչը ռիսկի տակ է դնում համակարգված աշխատանքների իրականացումը: Այս ոլորտում կարևորագույն խնդիրներից է նաև այն, որ բուհի ներքին շահակիցների մասնակցությունն օտար լեզուների իմացության բարելավմանն ուղղված միջոցառումներին ցածր մակարդակի վրա է, և քայլեր չեն ձեռնարկվում այդ գործընթացը խթանելու համար: Թեև բուհը միջազգայնացմանն ուղղված քայլեր է ձեռնարկում, սակայն դեռևս չունի փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր:

Դրական է համալսարանում ՈԱ բաժնի առկայությունը և «ԳՊՀ որակի ապահովման համակարգ» ձեռնարկի մշակումը: Այնուամենայնիվ, որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանն ուղղված համալսարանի քայլերը դեռևս համակարգված չեն: Տարբեր գործընթացները կանոնակարգող մեխանիզմների և գործիքակազմի արդյունավետության վերլուծությունների բացակայությունը ԳՊՀ-ին հնարավորություն չի տալիս գնահատել որակի ապահովման գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և ԳՊՀ-ի ընդհանուր գործունեության բարելավման վրա: ՊԻԳԲ շրջափուլով որակի ապահովման գործընթացների ոչ պարբերական իրականացումն, այդ գործընթացներին արտաքին շահակիցների պասիվ մասնակցությունը կարող են խոչընդոտել ԳՊՀ-ի գործունեության շարունակական բարելավումը:

Հաշվի առնելով, որ

ա/ լինելով ՀՀ Սյունիքի մարզի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը՝ Գորիսի պետական համալսարանը լուծում է տարածաշրջանի աշխատաշուկան անհրաժեշտ կադրերով ապահովելու կարևոր խնդիր,

բ/ ֆինանսական սուղ միջոցների պայմաններում Համալսարանը ստեղծել է բավարար ուսումնական միջավայր՝ անհրաժեշտ նյութական ռեսուրսներով և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող դասախոսական կազմով կրթական ծագրերը պատշաճ մակարդակով իրականացնելու համար,

գ/ ինստիտուցիոնալ կարողություններում վեր են հանվել որոշակի թերություններ.

1) **«Կառավարումը և վարչարարությունը»** ոլորտի խնդիրներն անմիջականորեն ազդում են բուհի կառավարման համակարգի հստակեցման և արդյունավետության բարձրացման, գործընթացների պլանավորված իրականացման, տվյալների վերլուծությամբ հիմնավորված և էթիկայի կանոններին համապատասխան որոշումների կայացման վրա,
2) **«Հետազոտությունը և զարգացումը»** ոլորտի թերությունները թուլացնում են համալսարանական գործունեության հիմնական ուղղություններից մեկի՝ գիտական հետազոտությունների տեսակետից ԳՊՀ-ի դիրքը, հետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապը, կարող են խանգարել շրջանավարտների մոտ վերլուծական կարողությունների ձևավորմանը,
3) **«Արտաքին կապերը և միջազգայնացումը»** ոլորտի թերությունները թույլ չեն իրականացնել բուհի առջև դրված հավակնոտ միջազգայնացման նպատակները, միջազգային ծրագրերի փորձառությունը ներդրնել կրթական գործընթացներում և ՄԿԾ-ներում, չեն նպաստում բավարար կարողությունների ձևավորմանը,
4) **«Որակի ներքին ապահովման համակարգը»** ոլորտի թերությունները բուհին թույլ չեն տալիս գնահատել իրականացվող գործընթացների անդյունավետությունը, պարզել առկա թերություններն ու սպառնացող ռիսկերը, լուծումներ փնտրել շահակիցների հետ,

դ/ հրատապ չվերացնելու դեպքում նշված ոլորտների թերությունները կարող են ռիսկային դարձնել բուհի ռազմավարական նպատակների իրականացումը և շրջանավարտների որակավորումների շնորհման արժանահավատությունը,

ե/ հաստատության ուժեղ կողմերի, հնարավորությունների և առկա խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավիճակը շտկող խորհրդատվության իրականացումը իրատեսական է, սակայն արտաքին խիստ մշտադիտարկման կարիք ունի՝

Հավատարմագրման Հանձնաժողովը քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին շնորհել Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 / երկու / տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   ա) **«Կառավարումը և վարչարարությունը», «Հետազոտությունը և զարգացումը» «Արտաքին կապերը և միջազգայնացումը»** և **«Որակի ներքին ապահովման**

համակարգը» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի առանցքային ցուցիչներ (KPI) ունենալու պահանջը,

գ) Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին ինտեգրվելու Համալսարանի հավակնությունների տեսակետից միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը, կառավարման համակարգի բարելավմանը, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը, որակի ներքին ապահովմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ, գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Համալսարանի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ս. Ավետիսյան**
2018 թ. ապրիլի 12
ք.Երևան